ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/18

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.02.2017թ. թիվ 04/26-3/2620-18 գրությամբ «Բայազետ 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.02.2018թ. թիվ ԴՎԱ/465 գրության հիման վրա, 08.02.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Բայազետ 1» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 09.02.2018թ. թիվ ԴՎԱ/465 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման նիստից հետո «Բայազետ 1» ՍՊԸ-ին ծանուցվել է ներկայացնելու ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հատատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն սահմանված /երեք աշխատանքային օր/ մասնակցի կողմից վերը նշված փաստաթղթերը չեն ներկայացվել:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշեց նույն ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով մերժել «Բայազետ 1» ՍՊԸ-ի հայտը:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Սարգիս Պետրոսյանը:

3. <u>«Բայազետ 1» ՍՊԸ ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Խորհուրդը դիմել է «Բայազետ 1» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.02.2018թ. թիվ 04/26-3/2620-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել

Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Բայազետ 1» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/18 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.02.2018թ. թիվ 04/26-3/2620-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 09.02.2018թ. թիվ ԴՎԱ/465 գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3 գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3 գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 27.12.2017թ. նիստի թիվ 3 և 06.02.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, Ընկերության կողմից նշված գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը մսեղիքի ձեռքբերման նպատակով կազմակերպել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բայազետ 1» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 27.12.2017թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով որոշել է ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններին մասով «Բայազետ 1» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 4.2 կետով առաջարկել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին ներկայացնել ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 06.02.2018թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3 ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «Բայազետ 1» ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը գնումները համակարգողի էլ. փոստին սահմանված ժամկետում չի ուղարկվել և որոշել է մերժել մասնակցի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3 հավելվածով՝ հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:
- N 4 հավելվածով՝ հրավերով սահմանված առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համախատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին: Սույնով «Բայազետ 1» ՍՊԸ-ն պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել

է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2015թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում

մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի 8.13 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Խորհուրդն արձանագրում է, որ սահմանված ժամկետում Ընկերությունը չի ներկայացրել հրավերով սահմանված որակավորման չափանիշներին «Բայազետ 1» ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և Հանձնաժողովը՝ մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ:

Խորհուրդը գտնում է, որ «Բայազետ 1» ՍՊԸ-ն՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետներում չներկայացնելով՝ խախտել է ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 4 հավելվածով ստանձնած՝ հրավերով սահմանված կարգով նույն հայտարարությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պարտավորությունը:

Այսպիսով, Խորհուրդն գտնում է, որ Ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.02.2018թ. «Բայազետ 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Բայազետ 1» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ